ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
23 նոյեմբերի 1999 թվականի

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 6. Աշխարհագրական օբյեկտների անվանակոչման և անվանափոխման կարգը

1. Աշխարհագրական օբյեկտների անվանակոչման կամ անվանափոխման մասին առաջարկություններ կարող են անել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական կազմակերպությունները, իրավաբանական ու ֆիզիկական անձինք:

2. Ըստ աշխարհագրական օբյեկտների գտնվելու տեղի՝ առաջարկությունները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետներին:

3. Հայաստանի Հանրապետության մարզպետները երկշաբաթյա ժամկետում քննարկել աշխարհագրական օբյեկտների անվանակոչման կամ անվանափոխման մասին առաջարկություններն ու դրանք հիմնավորող փաստաթղթերը և իրենց եզրակացությունն են ներկայացնում ~~աշխարհագրական անվանումների բնագավառի պետական կառավարման լիազորված մարմին~~ Անշարժ գույքի կադաստրի կոմիտե:

4. ~~Աշխարհագրական անվանումների բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը~~ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության ստեղծած մասնագիտական հանձնաժողովի հետ ուսումնասիրում է աշխարհագրական օբյեկտների անվանակոչման կամ անվանափոխման մասին առաջարկությունները: Դրական կարծիքի դեպքում սահմանված կարգով դրանք ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը:

(6-րդ հոդվածը լրաց. 08.04.08 ՀՕ-22-Ն, փոփ. 21.03.12 ՀՕ-97-Ն)

Հոդված 10. Աշխարհագրական անվանումների բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

ա) ~~ապահովում է աշխարհագրական անվանումների բնագավառում պետական քաղաքականության իրականացումը~~ մշակում է աշխարհագրական անվանումների բնագավառում պետական քաղաքականությունը.

բ) որոշումներ է կայացնում Հայաստանի Հանրապետության տարածքի աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների մասին սույն օրենքով սահմանված դեպքերում.

գ) կազմավորում է աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների մասնագիտական հանձնաժողով.

դ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

(10-րդ հոդվածը փոփ. 21.03.12 ՀՕ-97-Ն)

Հոդված 11. ~~Պետական կառավարման լիազորված մարմնի~~ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի իրավասությունը

~~Պետական կառավարման լիազորված մարմինը~~ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն՝

ա) ապահովում է աշխարհագրական անվանումների բնագավառում պետական քաղաքականության իրականացումը, վերահսկում է աշխարհագրական անվանումների բնագավառում իրավական ակտերի և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից.

բ) ղեկավարում է աշխարհագրական անվանումների ազգային տեղեկատվական բանկի և Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի ստեղծման ու վարման աշխատանքները.

գ) հաշվառում, այնուհետև գրանցում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներբնակավայրային օբյեկտների անվանափոխումներն ու անվանակոչումները.

դ) *(ենթակետն ուժը կորցրել է 21.03.12 ՀՕ-97-Ն)*

ե) համագործակցում է միջազգային համապատասխան կազմակերպությունների հետ.

զ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների ֆիզիկական ու իրավաբանական անձանց տեղեկություն է տալիս աշխարհագրական անվանումների մասին.

է) իրականացնում է ~~Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ~~ օրենքով սահմանված այլ լիազորություններ:

(11-րդ հոդվածը փոփ. 21.03.12 ՀՕ-97-Ն)

Հոդված 12. Աշխարհագրական անվանումների բնագավառի կարգավորման նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համակարգը

1. Աշխարհագրական անվանումների բնագավառի կարգավորման նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը սահմանում են Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների բացահայտման, կանոնավորման,

օգտագործման և պահպանության նկատմամբ միասնական պահանջները, նորմերը և կանոնները:

2. Աշխարհագրական անվանումների բնագավառի կարգավորման նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերը հաստատում է աշխարհագրական անվանումների բնագավառի ~~պետական կառավարման լիազորված մարմինը~~ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն: